Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների գնահատումը ուսումնառության ընթացքում

Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Բեյբության Հասմիկ

ՈՒսուցչուհի՝ Աստղիկ Գրիգորյան

Դպրոց՝ Երանոս N1 միջնակարգ դպրոց

ՄԱՐՏՈՒՆԻ-2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ I. Գնահատում----------4

1.1 Ո՞ւմ և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը----------5

1.2 Ի՞նչն ենք գնահատում և ե՞րբ ենք գնահատում----------6

Գլուխ II. Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները----------7

2.1 Բանավոր հարցում----------8

2.2 Գործնական աշխատանք----------9

2.3 Թեմատիկ աշխատանք----------10

2.4 Նախագծային աշխատանք----------13

2.5 Ամփոփիչ աշխատանք (բացառիկ դեպքերում)----------15

Գլուխ III. Փորձարարական հետազոտություն----------16

3.1 Խմբի նկարագիրը----------16

3.2 Փորձարարական դասեր----------16

3.3 Փորձարարական դաս-1----------16

3.4 Փորձարարական դաս -2----------17

Վերլուծություն----------18

Դասապլան-1----------19

Դասապլան-2----------21

Եզրակացություն----------23

Գրականության ցանկ----------24

Ներածություն

Հանրակրթության պետական կրթակարգի գլխավոր նպատակը որակյալ կրթության ապահովումն է, կրթության հանդեպ հայ ժողովրդի ավանդական վերաբերմունքի պահպանումն ու ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

Կրթակարգը պետության և հասարակության համար կրթության կազմակերպման գործընթացն ու արդյունքները վերահսկելու և գնահատելու միջոց է:

Կրթության որակի բարելավման խնդիրը միշտ արդիական է: Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթակարգով, պետական չափորոշչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանը: Նշենք, որ հիմնականում կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի հետևաբար և հասարակության զարգացումն ու բարեկեցությունը: Կրթության նկատմամբ ձևական և մակերեսային վերաբերմունքը վնասում է թե՛ հասարակությանը, թե՛ պետությանը: Այդ խնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներում առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին: Պետությունը իր հիմնական գործառույթն է համարում կրթության բովանդակության ընդհանուր պահանջներին և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումը: Այդ մոտեցման վրա է հիմնված Հայաստանի հանրակրթության պետական կրթակարգը: Շատ կարևոր է գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը, այն ներդնելը, քանի որ գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմամբ:

Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային որակների, ուսումնական գործընթացի կատարելագործման վերահսկումն է:

ԳԼՈՒԽ I

Գնահատում.

Գնահատել նշանակում է ստեղծագործել: **(Գյոթե)**

Գնահատում իրականացնելուց առաջ նախ պետք է հասկանանք.



Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը, ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին:

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է: Հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

- Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացիկ արձանագրումը, թերությունների բացահայտումն ու շտկումը:

- Հանրակրթության պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների յուրացման ընթացիկ բացահայտումը, ինչպես նաև դրանց փուլային ստուգումն ու գնահատումը:

Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության , մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սյուբեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը:

Գնահատումը սյուբեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից սկզբունքներից և վերաբերմունքից: Սյուբեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքները:

1.1 Ո՞ւմ և ինչի՞ն պետք է ծառայի գնահատումը.

Գնահատումը պետք է ծառայի աշակերտին, ուսուցչին, ծնողին նաև այլ հետաքրքրվող անձանց: Գնահատումը ծառայում է սովորողի կրթության մակարդակի բարելավմանը ու արդյունավետության բարձրացմանը: Գնահատման շնորհիվ է բացահայտվում այն խնդիրների շրջանակը, որոնք լուծում են պահանջում:

Աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերվի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին:

Ուսուցչի համար այն պետք է աշխատանք պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի:

Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու , ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա:

Այլոց՝ շահագրգիր կամ հետաքրքրված անձանց համար (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու միջոց լինի:

1.2 Ի՞նչն ենք գնահատում և ե՞րբ ենք գնահատում

Ի՞նչն ենք գնահատում. արդյունքները, գործընթացը: Գնահատվում է ոչ միայն սովորողի աշխատանքի արդյունքը, այլև այդ արդյունքին հասնելու գործընթացում կիրառված համագործակցային հմտությունները:

Գնահատման համակարգը պետք է ներառի միջոցներ, որոնք կգնահատեն.

1) Գիտելիքներ
2) Հմտություններ
3) Դիրքորոշում
4) Արժեքներ

Ե՞րբ ենք գնահատում. սովորելուց առաջ, սովորելու ընթացքում և սովորելուց հետո: Սակայն գնահատման չափանիշները սահմանվում են նախօրոք: Կարևոր է, որ աշակերտը նախապես իմանա՝ ինչ է ակնկալվում իրենից, և ինքն ինչ պիտի անի ավելի լավ արդյունքի հասնելու համար:

Գնահատումը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Գնահատումները դպրոցում կիրառվում են սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Գլուխ II.

Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները.

Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է. «Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»:

Սովորողների ուսումնառության ընթացիք արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Նախագծային աշխատանք
- Ամփոփիչ աշխատանք (բացառիկ դեպքերում)

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային

գնահատումը՝ պարտադիր չէ:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ, և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա: Սովորողի ուսումնառության արդյունքների միավորային գնահատման ենթակա բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների միավորների բնութագրիչները սահմանված են Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողի մասին: Դրանով բացահայտվում են վերջինիս՝ տարբեր կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանները: Այդ համապատկերում սովորողին պարզ են դառնում նրա գործունեության հաջողված և թերի կողմերը: Դա հնարավորություն է ընձեռնում սեփական թերությունները վերացնել, ինչպես նաև ճիշտ կողմնորոշվել ապագա մասնագիտություն ընտրելիս:

2.1 Բանավոր հարցում

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման,

լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք
- վերարտադրություն
- հաղորդակցություն
- համագործակցություն
- լեզվամտածողություն
- տրամաբանություն
- գիտելիքի յուրացում
- ստեղծագործական մտածողություն

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով.

- ✓ աշակերտներին ուղղված բանավոր հարցերի միջոցով
- ✓ տնային աշխատանքների ստուգմամբ
- ✓ համագործակցային կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

1. ակադեմիական գիտելիքի իմացության
2. կիրառելու կարողության
3. ներկայացնելու կարողության
4. ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողության
5. միջառարկայական կապերը հասկանալու կարողության:

2.2 Գործնական աշխատանք և կիրառություններ



Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական, կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական աշխատանքներն են ուսումնական փորձերն ու լաբարատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստությունն ու այլ ֆիզիկական աշխատանքները: Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանն և կրթության շարունակականության ապահովմանը ուղղված հմտությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների և փաստերի ըմբռման աստիճանը
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

2.3 Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր:

Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է նաև լինել բանավոր կամ գործնական:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ.

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ
- ճիշտ պատասխանի ընտրությամբ
- կարճ պատասխան պահանջող
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող
- կառուցվածքի փոփոխություն պահանջող
- համապատասխանեցման պահանջով
- բաց թողածը լրացնելու պահանջով:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ,

որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործարար կիրառելու հմտություն:

Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով:

Միավորը	*Անվանումը*

10	Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում ,հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանքը պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկությունը:
9	Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում,հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկությունը:
8	Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:
7	Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն , հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

6	*Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:*
5	*Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:*
4	*Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն , և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:*
3	*Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:*
2	*Յուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:*
1	*Չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:*

Վերևում նշված 10 միավորային սանդղակը հիմք է հանդիսանում յուրաքանչյուր ուսումնական առարկայի 10 միավորային գնահատման սանդղակի միավորների բնութագրիչների մշակման համար՝ հաշվի առնելով տվյալ ուսումնական առարկայի չափորոշիչը:

2.4 Նախագծային աշխատանք

Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն։ Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր։ Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային մեթոդը ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիրներ:

Դեռևս 20-րդ դարի առաջին կեսին Ջոն Դյուիի կողմից պրագմատիկ մանկավարժության՝ հիման վրա մշակված նախագծերի մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում:

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակումը, որտեղ ևս այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական:

Նախագծային աշխատանքը հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Նախագծային աշխատանք պլանավորելիս հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պատրաստվածության աստիճանը, ՏՀՏ հմտությունները, լեզվի իմացությունը:

Ինչպես գնահատման մյուս տարատեսակները, այնպես էլ նախագիծին ևս կա ներկայացվող պահանջներ:

Նախագիծը պետք է ունենա.

- թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ
- աշխատաքի փուլեր (նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ)
- աշխատանքի վերջնաժամկետ
- ակնկալվող արդյունք (հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում, և այլն):

Այժմ կարևոր է նախագծային աշխատանքի անցկացումը, 7-12-րդ դասարանում յուրաքանչյուր աշակերտ տարեկան պետք է իրականացնի առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից:

Նախագիծ կազմելիս սովորողի կարծիքը հաշվի առնելը սկզբունք է, որն անպայման պետք է հաշվի առնել:

Աշխատանքը պետք է ունենա ղեկավար, որպեսզի ուղորդի սովորողին: Այսպես, նախագծի ղեկավարը կատարում է նախագծի նախնական պլանավորում, ապահովում է առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությունը, որը կողմնորոշում է սովորողներին՝ ինչպես, ինչ ուղղությամբ սկսել աշխատանքը, տալիս է համացանցային հղումներ, գրքերի անուններ և այլ անհրաժեշտ նախնական տեղեկություն: Հետևում է նախագծի աշխատանքի ընթացքին և ավարտին է հասցնում նախագիծը՝ վերջնական արտադրանքի տեսքով:

Իսկ արդեն աշխատանքի վերջին փուլում, երբ նախագիծը պատրաստ է սովորողը պիտի

կարողանա ներկայանալ և ներկայացնել նախագիծը.

- համառոտ նկարագրել կատարված աշխատանքը՝ ինչ խնդիր են դրել, ինչու են ընտրել հենց այդ թեման, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, որն է նախագծի արդյունավետությունը:

2.5 Ամփոփիչ աշխատանք (բացառիկ դեպքերում)

Ամփոփիչ աշխատանքը իրականացվում է միայն բացառիկ դեպքերում:

Գլուխ III.

Փորձարարական հետազոտություն . Խմբի նկարագիրը

Հետազոտական աշխատանքն իրականացվել է՝ Գեղարքունիքի մարզի Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում: Այս դասարանում սովորում են 23 աշակերտ 12 տղա և 11 աղջիկ, որոնք ունեն առաջադիմության և հմտությունների տարբեր աստիճաններ:

Այս խմբում անգլերենն անցնում է շաբաթական 2 ժամ, դասացուցակում այն տեղադրված է 1-ին և 4-րդ ժամերին: Անցկացրել եմ 2 հետազոտական դասեր, որոնց ընթացքում փորձարկվել է խմբային և զույգերով աշխատանք պարզաբանելու համար, թե որքան նպատակային կլինի peer assessment մեթոդով գնահատել միմյանց:

Փորձարարական դաս 1

Այսօրվա դասի թեման էր «The Noun» (տես դասապլան 1 էջ) : Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. Բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քնարկվեց տնային աշխատանքի սխալները: Բանավոր հարցումով (հարցադրումներով) սկսվեց դասը: Ամփոփեցինք անցած թեման,

որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ : Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցերին:

Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո, անցանք նոր դասանյութի հաղորդմանը, փորձեցի հարցադրումների միջոցով ստուգել նրանց գիտելիքները նոր դասից:

Դասն ավարտեվեց տնային աշխատանքի հանձնարարումով: Որպես տնային աշխատանք հանձնարարվեց եզակի թվով գրված գոյականները դարձնել հոգնակի թիվ և կիրառել դրանք նախադասության մեջ:

Փորձարարական դաս 2

Այսօրվա դասի թեման «Simple Past » ժամանակաձևն էր (տե՛ս դասապլան 2 էջ): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. Բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, փորձեցին բանավոր հետադարձ կապ ստեղծել: Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք անցած թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ : Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև գրատախտակը բաժանվեց 2 մասի:

Գրատախտակին գրվեցին տարբեր նախադասություններ և 2 աշակերտ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ՝ ընդգծելով բայերը: Մնացած աշակերտները աշխատում էին իրենց տետրերում՝ հնչեցնելով իրենց համար անհասկանալի հարցերը: Դասն ավարտեվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար անցկացվեց 2 փորձարարական դասեր, որի ժամանակ աշակերտները կատարեցին , թեստային առաջադրանքներ, խմբային և զույգերով աշխատանք տրվեցին հարցեր՝ փակ , բաց , հուշող, ենթատեքտով, հետադարձ և ուղղորդող: Խմբային և զույգերով աշխատանքը հնարավորություն է տալիս աշխատել խմբերով՝ բացահայտելու և դրսևորելու իրենց անհատականությունը, համատեղ աշխատանքին մասնակցելու ունակություն և համագործակցելու կարողություն: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սովորեցնում է սովորել: Խմբային աշխատանքը նպաստում է աշակերտի սոցիալականացմանը, մտածողության ճկանացմանը, անձնական որոշ բարդույթներից ազատվելուն, գիտելիքի տրամաբանական մտածողության դրսևորմանը և քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Խմյաին կամ զույգերով աշխատանքի միջոցով արվում է փոխադարձ գնահատում: Դասերի ընթացքում կիրառվեցին բազմաթիվ մեթոդներ, այդ թվում աղյուսակների կազմում:

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Աստղիկ Գրիգորյան

Առարկա՝	**Անգլերեն**	**Ամսաթիվ**	**28.04.2022**	**Կիսամյակ**	**2**	**Դասարան**	**VI**
Թեմա՝	The Noun						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, տետր, գրիչ:						
Դասի նպատակը՝	Իմանալ գոյականի տեսակները անգլերենով, Իմանալ եզակի և հոգնակի թիվը, անկանոն ձևերի կազմությունը, Եզակի թվով դրված գոյականները դարձնել հոգնակի, իսկ հոգնակի թվով դրված գոյականներ եզակի , և դրանք կիրառել նախադասությունների մեջ:						
Վերջնարդյունքները	• Աշակերտները կկարողանան, եզակի թվով դրված գոյականները դարձնել հոգնակի, իսկ հոգնակի թվով դրված գոյականները կկիրառեն նախադասությունների մեջ: • Կսովորեն նաև անկանոն ձևերի կազմությունը:						
Գործողություններ (ժամ)	Ուսումնական Գործունեություն	Ուսումնական Գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			

	Աշակերտներ	Ուսուցիչ		
Մուտք, ներկա-բացակա (3ր) **Սկիզբ (5-7ր)**	Բացել դասագրքերը պատրաստվել նոր դասին, ներկայացնել տնային աշխատանքները	Ողջույնել դասարանին, ն/բ Ստուգել տնային աշխատանքները բացատրել անհասկանալի մասերը	1.Ո՞րն է կոչվում գոյական: 2.Թվարկե՞ք մի քանի հաշվելի և անհաշվելի գոյականներ: 3.Քանի՞ թիվ ունի գոյականը: 4.Ինչպե՞ս է կազմվում գոյականի անկանոն ձևերի հոգնակի թիվը:	Հարցադրումների մեթոդ, Մտագրոհ մեթոդ, Միջառարկայական կապ (հայոց լեզու)

Ընթացք (25-30)	Աշակերտները լսում են, նոթագրում են, մտածում տրված հարցերի մասին, հիշում անցածը, պատասխանում են հարցերին: Կարդում են հանձնարարված նյութը հաշվելի և անհաշվելի գոյականների, անկանոն ձևերի վերաբերյալ ,քննարկում են զույգերով՝ ապա խմբով, ներկայացնում վերջին «անհասկանալի է. ցանկանում եմ քննարկել» հատվածը:	Մտագրոհ է անում հարցերի միջոցով փորձում հիշեցնել նախորդ դասերին անցածը , լսում կարծիքները: Բացատրում է հանձնարարությունը, շրջում դասարանում ,ուղղորդում և օգնում դժվարացող աշակերտներին , դասարանի օգնությամբ պատասխանում առաջ քաշված հարցերին, առաջադրում հարցադրումներ, ամփոփում հիմնական մտքերը:		
Ավարտ (5 րոպե)	Լուռ լսել դասը, կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցերը:	Նոր թեմայի հաղորդում , բանավոր հետադարձ կապի տրամադրում:		
Տնային աշխատանք՝ վարժություն 12, 13:				

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Աստղիկ Գրիգորյան

Առարկա՝	**Անգլերեն**	**Ամսաթիվ**	**14.04 .2022**	**Կիսամյակ**	**2**	**Դասարան**	**VI**
Թեմա՝	Simple Past						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետր, բառարան:						
Դասի նպատակը՝	Իմանալ անցյալ ժամանկաձևերի կազմությունը հայոց լեզվից, կհասկանա անցյալ ժամանակաձևի կազմությունը անգլերենում, կսովորի անցյալ ժամանակաձևի հարցական և ժխտական ձևերի կազմությունը, կիմանա անկանոն ձևերի կազմությունը						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. • թվել մի շարք անկանոն բայեր, որոնք կօգտագործվեն նախադասությունների մեջ • դուրս բերել տեսքստից անցյալ անորոշ ժամանակաձևի բայերը • կազմել նախադասություններ դուրս բերված բայերով՝ դարձնելով հարցական և ժխտական						
Գործողություններ (ժամ)	Ուսումնական Գործունեություն Աշակերտներ	Ուսումնական Գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			
Մուտք, ներկա-բացակա (3ր) **Սկիզբ (5-7ր)**	Բացել դասագրքերը պատրաստվել նոր դասին, ներկայացնել տնային աշխատանքները:	Ողջույնել դասարանին, ն/բ Ստուգել տնային աշխատանքները բացատրել անհասկանալի մասերը:	1. Ի՞նչ է ցույց տալիս անցյալ ժամանակաձևը հայերենում: 2.Որո՞նք են անգլերենում անցյալ անորոշ ժամանակաձևի օժանդակ բայերը:	Հարցադրումների մեթոդ Տ-աձև աղուսյակ Միջառարկայական կապ (հայոց լեզու)			

Ընթացք (25-30)	Աշակերտները պատասխանում են հարցերին, փոխադարձ հարցեր տան : Երկու աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին , մյուսները կատարում են նշելումներ տետրերում:	Մատուցում է նյութը, այնուհետև տալիս է հարցադրումներ ,որպեսզի աշակերտներին ներգրավվի դասապրոցեսին: Գրատախտակը բաժանել երկու մասի, գրել տարբեր նախադասություններ՝ դարձնելով այն հարցական և ժխտական: Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ:		
Ավարտ (5 րոպե)	Լուռ լսել դասը, կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցերը:	Նոր թեմայի հաղորդում , բանավոր հետադարձ կապի տրամադրում:		
Տնային աշխատանք՝ ինքնուրույն աշխատանք իրենց ցանկությամբ կազմել 5 նախադասություններ դարձնել հարցական և ժխտական:				

Եզրակացություն

Այսօր ուսուցիչներիս համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել: Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Այսօր փոխվել է: Մեզ արդեն մատչելի են նոր տեխնոլոգիաները, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրները, սակայն տեղեկատվության այս բազմազանությունն էլ իր հերթին խնդիրներ է առաջ բերում: Նոր նպատակները փոփոխություններ են բերել նաև կրթության բովանդակության մեջ: Զարգացնելով նորը, առաջ քաշվեց նաև ուսուցման, ստուգման ու գնահատման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ուսուցիչները ակտիվ մասնակցում են այս գործընթացին, անցկացվում են վերապատրաստումներ՝ մասնագիտական զարգացման համակարգի շրջանակներում ներդրվում են նոր մեթոդներ ու տեղեկատվության հետ աշխատելու, նոր տեխնոլոգիաներից օգտվելու կարողություն: Պետք է ուսուցիչները անընդհատ զբաղվեն ինքնակրթությամբ, ինքնակատարելագործմամբ: Եվ այս ամենը կնպաստի ավելի որակյալ կրթության: Այս ամենի հետ շատ կարևոր տեղ ունի գնահատումը, կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում , որպես սկզբունք, նվազեցնում են միավորային կամ նիշային գնահատման վրա կենտրոնանալը ՝ ի օգուտ ուսուցանող աշխատանքների, գործնական աշխատանքների ու գիտելիքների կիրառությունների: Հետադարձ կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները և արվում հետևություններ՝ կապված ուսուցման ձևերի ու մեթոդների պետական չափորոշիչների, ծրագրային նյութերի և թեմատիկ պլանների վերանայման անհրաժեշտության հետ:

Այս ամենով մենք՝ ուսուցիչներս արժևորում, դատողություններ ենք անում աշակերտի արածի և ձեռք բերածի արժեքային համակարգի մասին:

Գրականության ցանկ

1. Դասի պլանավորում և գնահատում Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ. Պատրաստվել է << Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով>> ծրագրի համար:
2. Հանրակրթության ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան 2008թ:
3. Մասնագիտական զարգացման ձեռնարկ: